ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ---------------------------------------

«01» ----09----------------2023 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

__________5Գ____________դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Եփրեմյան Անահիտ Հենրիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

## ***Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները***

***Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)***

***Դասարանը բաղկացած է 30 աշակերտից, որոնցից 16 -ը աղջիկ են, իսկ 14-ը՝ տղա:Շատ համախմբված են ու աշխատասեր՝ բացառությամբ մի քանի աշակերտի: Դասարանում առողջ մրցակցություն կա , իսկ որտեղ մրցակցություն կա , այնտեղ բարձր է առաջադիմությունը: Որոշ կարգապահական խնդիրներ են ծագում, սակայն հետևողական աշխատանքների շնորհիվ դրանք համոզված եմ կշտկվեն:***

### ***Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները***

### ***Հայեցի դաստիարակություն***

***Հոգևոր դաստիարակություն*** *խնդիրները՝*

*Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

***Պետք է կարևորել բարոյական չափանիշները, քրիստոնեական և համամարդկային արժեքները: Կարևորել***

***ազնվությունը, գթասրտությունը , արդարամտությունը, բարեկրթությունը և օրինապահ լինելը:***

**Գեղագիտական դաստիարակություն**- *Խնդիրները՝*

---

*Աշակոնյթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: Կարևորել գեղագիտական արժեքները : Գնահատել գեղեցիկը, բարին, ճշմարիտը: Կազմակերպել զրույցներ , ընթերցանություններ, քննարկումներ դասական և ժամանակակից գրողների ստեղծագործությունների թեմաներով:* ----------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------

**Ռազմահայրենասիրական դաստիարակություն** *Խնդիրները՝*

*Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:----Իմանալ օրհներգը, ճանաչել դրոշն ու զինանշանը: Սերմանել հայրենասիրություն, կարևորել ազգային հիմնախնդիրների լուծման գործում սեփական անձի անձնվիրության անհրաժեշտությունը: Հերոսների հետահայացումներ:* -----------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------

***Ֆիզիկական դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:*

*Զրույց անձնական հիգիենայի, օրվա ռեժիմի մասին: Ստեղծել իրավիճակ վատ սովորություններից հրաժարվելու և սպորտային միջոցառումներին ակտիվ մասնակցելու համար :*

---

***Աշխատանքային դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:*

---

*Խոսել մասնագիտությունների , արհեստների կարևորությունների մասին: Մասնակցել շաբաթօրյակներին, ծառատունկին: Կազմակերպել քննարկումներ<< Ի՞նչ մասնագիտություն ընտրել>> և << Ի՞նչ գիտեմ այդ մասնագիտության մասին>> թեմաներով:*

***Բնապահպանական դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում: Զրույցներ կազմակերպել << Բնության պահպանման և շրջակայքի մաքրության մասին>> թեմայով: Բնության դերը մարդու կյանքում թեմայով կազմակերպել քննարկումներ և վավերագրական ու ուսումնական ֆիլմերի դիտում այդ թեմայով :*

---

***Դպրոց-ընտանիք կապը*** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց -ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն: Կապ պահպանել ծնողների հետ օրագրերի, << emis.am>> կայքի միջոցով: Ծնողներին տեղեկացնել աշակերտների վարքի , առաջադիմության մասին և ապահովել դպրոցի , մանկավարժական կոլեկտիվի ու սովորողների, նրանց ընտանիքների միասնականությունը՝ արդյունքի հասնելու նպատակով:*

## *ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

### ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | | 2-րդ կիսամյակ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | դասաժամը | Շաբաթվա օրը | դասաժամը |
| ուրբաթ | 7 | ուրբաթ | 7 |

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ամսաթիվ | Կատարվել է |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| I | Կազմակերպչական հարցեր:Զրուցել դասագրքերի պահպանման ,առաջադիմության և կարգապահության մասին: | 07.09 | կատարված է |
| II | Զրուցել հագուստի, հաճախումների , էթիկայի , քաղաքավարության մասին: | 14.09 | կատարված է |
| III | Զրույց նվիրված Հայաստանի անկախության օրվան, դրոշի, զինանշանի մասին: Անգիր իմանալ օրհներգը: | 21.09 | կատարված է |
| IV | Զրույց << Ինչպես եմ ես ինձ դրսևորում տանը, ինչպիսին եմ ես դպրոցում>>: | 28.09 | կատարված է |
| V | Զրույց << Իմ սիրելի ուսուցիչը>> թեմայով: | 05.10 | կատարված է |
| VI | Այցելել դպրոցի գրադարան, ծանոթանալ գրադարանից օգտվելու կանոններից: | 12.10 | կատարված է |
| VII | Զրույց << Գիրքը հոգևոր հաց է>> թեմայով: | 19.10 | կատարված է |
| VIII | Զրույց << Աշնանային խճանկար >> թեմայով: | 02.11 | կատարված է |
| IX | Զրույց << Ո՞րն է առողջ ապրելակերպի գրավականը>> թեմայով: | 09.11 | կատարված է |
| X | Զրույց << Դրական լիցքերը և դրանց դերը մարդու կյանքում>> թեմայով: | 16.11 | կատարված է |
| XI | Զրույց << Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները>>թեմայով: | 23.11 | կատարված է |
| XII | Հաշմանդամների համաշխարհային օրվան նվիրված զրույց: | 30.11 | |
| XIII | Զրույց <<Բնության աղետները>> թեմայով: | 07.12 | |
| XIV | Զրույց << Ի՞նչ է պատասխանատվության զգացումը>> թեմայով: | 14.12 | |
| XV | Առաջադիմության ամփոփում | | |
| XVI | Զրույց <<Համացանցի օգտակարության և վնասակարության մասին>> թեմայով: | 11.01 | |
| XVII | Զրույց <<Քո անվտանգությունը քո ձեռքում է>> թեմայով: | 18.01 | |
| XVIII | Զրույց <<Հայոց անպարտ բանակը>> թեմայով: | 25.01 | |
| XIX | Հաղորդակցման ժամ << Աշխարհին իմ պատուհանից>>: | 01.02 | |
| XX | Զրույց Հայ առաքելական եկեղեցու տաղավար տոներից Տյառնընդառաջի շուրջ: | 08.02 | |
| XXI | Քննարկում << Գիրքը գիտելիքի աղբյուր է>> թեմայով: | 15.02 | |
| XXII | Զրույց << Ինչպե՞ս հասկանալ ընկերներին>> թեմայով: | 22.02 | |
| XXIII | Զրույց << Սեփական կարծիք արտահայտելու կարևորությունը>> թեմայով: | 29.02 | |
| XXIV | Զրույց <<Մայրության, գեղեցկության և սիրո օրը>> թեմայով: | 06.03 | |
| XXV | Զրույց << Բնության պահպանության մասին>> թեմայով: | 14.03 | |
| XXVI | Զրույց << Ուժեղ լինել նշանակում է...>> թեմայով: | 21.03 | |
| XXVII | Զրույց <<Սուրբ Զատիկ>> թեմայով: | 04.04 | |

| | | | |
|---|---|---|---|
| XXVIII | Տիեզերագնացության օրվան նիրված զրույց: | 11.04 | |
| XXIX | Զրույց <<Հայոց ցեղասպանության հիշատակի օր>> թեմայով: | 18.04 | |
| XXX | Զրույց <<Ինչպե՞ս կառավարել հույզերը>> թեմայով: | 25.04 | |
| XXXI | Զրույց <<Աշխատավորների միջազգային օրն է>> թեմայով: | 02.05 | |
| XXXII | Զրույց <<Մեր պապերի և հայրերի փառահեղ հաղթանակը>> թեմայով: | 09.05 | |
| XXXIII | Զրույց <<Հայկական ավանդույթները>> թեմայով: | 16.05 | |
| XXXIV | ԱՄՓՈՓՈՒՄ | | |